

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Նախապես կայացած համաձայնության վրա, 1984 թ. հունիսի 13-ին, 14-ին և 15-ին Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոս և Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Բ կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո եղբայրական անձնական հանդիպումներ ունեցան Փարիզի մեջ:

Վեհափառ Հայրապետները ունեցան մտերմական զրույցներ մեր Եկեղեցին հուզող հարցերուն շուրջ և իրենց մտածումներու փոխանակման լույսին տակ եկան այն եզրակացության, որ անհրաժեշտ է որ հառաջիկային տեղի ունենան նման հանդիպումներ, շարունակվին բանակցությունները երկու Կաթողիկոսական Աթոռներու միջև և հարթվին գոյություն ունեցող տարակարծությունները, որպեսզի առավել ևս ամրանա Հայաստանյայց Եկեղեցվո միությունը և առավել արդյունավորությամբ պսակվի անոր ազգային-եկեղեցական սպասավորությունը:

Եղբայրական հանդիպումի ավարտին, Վեհափառ Հայրապետները սիրո և հայրախնամ հոգածության զգացումներով կողջունեն հայ ժողովուրդի բոլոր զավակները ի Մայր Հայաստան և ի սփյուռս աշխարհի: Կաղոթեն որ Բարձրյալն Աստված զոյացնե հայ ժողովուրդը ի խնամս մարդասիրության յուրո:

ԱՆՈՒՇԱՎԱՆ ՎՐԴ. ԴԱՆԻԵԼՅԱՆ
Քարտուղար
Գարեգին Բ Մեծի Տանն Կիլիկիո
կաթողիկոսի

ԱՍՈՂԻԿ ԱԲՂ. ԱՐԻՍՏԱԿԵՍՅԱՆ
Քարտուղար
Վազգեն Ա Ամենայն Հայոց
կաթողիկոսի

Փարիզ,
15 հունիս 1984 թ.